

**<<ՏԵԽՆՈԼՈԳԻԱ>> ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐ
(5-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)**

Տարրական դպրոց –Տեխնոլոգիայի տարրեր

Հիմնական դպրոց-Տեխնոլոգիայի հիմունքներ

Կերպարվեստ, տեխնոլոգիա

1. Առարկայի ուսուցման նպատակը, ընդհանուր և կոնկրետ դասարանում լուծվող խնդիրները (կարող է ընդհանուր լինել՝ կրտսեր դպրոցի, միջին դպրոցի, ավագ դպրոցի իրար շարունակող դասընթացների համար)

Տեխնոլոգիա հանրակրթական առարկայի հիմնական նպատակն է սովորողներին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին. դաստիարակել կիրթ,ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի:

Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը:

Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որը ուղված է մարդու գործնեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործնեության օպտիմալացման, արդյունքների զարգացման:

Տեխնոլոգիան ըստ էության գործնական ուղղորդող և ուսուցանող ոլորտ է:

Նա նաև ոլորտ է որտեղ ինտեգրվում են մյուս հանրակրթական առարկաներից ստացած գիտելիքները, գործնականում կիրառելով դրանք:

Կենսապես անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորումը, աշխատանքային կուլտուրան, թիմով աշխատելու ունակությունը, ինքնաճանաչման և ինքնահաստատման լավագույն ուղին է, որը փորձի ավելացմամբ միմիայն լավագույն որակների երաշխիք է հանդիսանում:

Այս ամենը հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված հիմնական ձևակերպումներն են տեխնոլոգիա առարկայի նպատակների և խնդիրների շուրջ:

Հանդիսանալով այլընտրանքային մանկավարժություն

իրականացնող ուսումնական հաստատություն, կրթահամալիրը հիմնվում է« Հանրակրթության պետական չափորոշիչների վրա՝ այլընտրանքային մշակման և փորձաքննության ենթարկելով այն:

Կրթահամալիրում տեխնոլոգիա առարկան ըստ ուսումնական պլանի,որը Ստեղծողի դպրոց, անհատի կրթական պատվեր.մեդիակրթություն(պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:

Ըստ ուս պլանի տեխնոլոգիա առարկան 1-ից 6-րդ դասարաններում դասավանդվում է շաբաթական երկուական ժամով և ձևակերպվում է որպես <Կերպարվեստ-տեխնոլոգիա>:

1-4-րդ դասարաններում ուսումնական պլանով նախատեսված դասընթացները կազմում են «Իմացումի հրճվանք» ծրագիրը, որի ղեկավար-դասվարը մասնակցում է գործունեության կազմակերպման բոլոր ձևերին:

Կերպարվեստ, Տեխնոլոգիա առարկան 1-4-րդ դասարաններում դասվարը ինքն է կազմակերպում և վարում դասապրոցեսը, պարբերաբար խորհրդակցելով մասնագետի հետ:

Կրտսեր դասարաններում տեխնոլոգիա-կերպարվեստ առարկաները, <<Իմացումի հրճվանք>> ծրագրի շրջանակներում, պարապում են իրենք՝ դասվարները:

Տեխնոլոգիական գործնունեությունը կտսեր դպրոցում թիմային է, աշխատանքները քննարկվում են և համաձայնեցվում ու ներկայացվում ցուցադրության: Աշխատանքի այս ձևը ապահովում է և որակ, և ոգի, իսկ սիրով արված աշխատանքը իմացումի հրճվանք է պարզում բոլորին՝ և սովորողին, և դասավանդողին, և ծնողին:

Տեխնոլոգիա առարկան 5-6-րդ դասարաններում կազմված է, խոհանոցային գործ, Տնտեսվարություն, Բույսերի և կենդանիների խնամք, Դիզայն դասընթացներից: Ըստ ուսպլանի <<Տեխնոլոգիա>> առարկան 7-9-րդ դասարաններում դասավանդվում է շաբաթական երկուական ժամով և ձևակերպվում է, որպես Տեխնոլոգիա, այդ թվում՝ մեդիա:

2. Ուսումնական միջավայր.

ուսումնական կաբինետ

համացանցում ուսուցման միջավայրը (կայք, ուսուցչի բլոգ....)

ուսուցչին անհրաժեշտ գործիքներ և նյութեր

սովորողին անհրաժեշտ գործիքներ և նյութեր

ուսումնական նյութեր (դասագիրք, ձեռնարկ, էլեկտրոնային ռեսուրս և այլն)

- Դասաժամերի բացթոյա կազմակերպումը դիտվում է որպես սովորողի իրավունքի իրագործում:

Ուսումնական միջավայր, սա ամենակարևոր նախապայմաններից է, որն ապահովում է այն ստեղծագործ մթնոլորտը, որտեղ աշխատել, պրպտել և ստեղծագործելը միմիայն հաճույք և հրճվանք է պատճառում: Արհեստանոց- արվեստանոցը լավագույն մոդել է տեխնոլոգիա առարկան գործնական և բազմաբովանդակ կազմակերպելու համար: Աշխատելով արհեստանոց-արվեստանոց մոդուլային լաբորատորիայում, փորձեմ նկարագրել այն որպես հաջողված օրինակ՝

Լաբորատորիան տարածքային առումով բավական ընդարձակ է, որը թույլ է տալիս միաժամանակ մի քանի նախագիծ իրականացնել, չկաշկանդելով միմյանց:

Լաբորատորիայի կիսանկուղային դիրքը հաշվի առնելով բավական լուսավոր է, որը ապահովում են ցերեկային լույսերի ճշգրիտ առկայությունը:

Վարդակների մասին նույնպես պետք չէ մոռանալ, նրանք պետք է հարմարեցված լինեն այնպես, որ լաբորատորիայի բոլոր անկյուններում հնարավոր լինի աշխատել:

Կողմնակի աղմուկի բացակայությունը, աշխատանքային եռուզեռը ավելի գրավիչ և պակաս հոգնեցնող է դարձնում:

Գույքը պետք է հարմարեցված լինի լաբորատորիայում ընթացող գործընթացներին. Մեծ մակերեսով սեղաններ, բաց և փակ պահարաններ իրենց դարակներով, թեթև շարժական աթոռներ: Պահարաններում խնամքով դասավորված են այն բոլոր ենթադրյալ նյութերը, որը հնարավոր է պետք գա նախագծերում, սովորողները լաբորատորիայում ազատ են տեղաշարժվում և հստակ տիրապետում են լաբորատորիայի գույքին: Չմոռանալով անձնային անվտանգության կանոնները, սովորողները կտրում, տաշում, սղոցում, սոսնձում և ամրացնում են, որի համար օգտագործվում են արհեստանոցային գործիքները, անհրաժեշտությունից ելնելով անընդհատ թարմացվում և նորացվում են դրանք:

Լաբորատորիայում ջրի առկայությունը նույնպես կարևոր նախապայման է, որը ապահովում է աշխատանքային և հիգենիկ նորմերը:

Ընդունում ենք, որ մեր բոլոր տարածքները WF-ացված են և մեզ անհրաժեշտ է տալ տեխնիկական հագեցվածության կարճ նկարագիր:

Համակարգիչ՝ բարձր պարամետրերով/մոնիտավային աշխատանքի համար/, հզոր պրոյեկտոր, պրոյեկտման աշխատանքներ, ֆիլմեր, նկարներ և վիրտուալ ցուցադրություններ իրականացնելու նպատակով:

Առաջադրանքի անհրաժեշտությունից ելնելով սովորողները աշխատում են իրենց անձնական համակարգիչներով:

Լաբորատորիայում ստեղծված և իրականացրած ամեն նոր նախագիծ լուսաբանվում է ՄՄԿՀ կայքում, սովորողները նյութեր են հրապարակում իրենց անձնական էջերից օգտագործելով կրթահամալիրյան, սոցիալական տարբեր կայքեր:

Դասավանդողի տարեկան հաշվետվությունը ներկայացնելիս ինձ ուղղակի անհրաժեշտ էր կայքից դուրս բերել իմ բոլոր մեթոդական հրապարակումներն ու թողարկած նյութերը, որը ինձ օգնեց մեկ ուսումնական տարվա կտրվածքով ամբողջացնել իմ արածը: Լուսանկարչական ապարատը իմ հավատարիմ ընկերն է ամենուր:

Տարիների ընթացքում ստեղծված աշխատանքների արդյունքները, արխիվացրել եմ, գործընկերներիս փորձը, համատեղ քննարկումները, կրթահամալիրյան օրացույցը, տարբեր կարգի տեղական և միջազգային ցուցահանդես –մրցույթները, որոնողական համակարգով բազմապիսի կայքերը ստիպում են ունենալով այն, ինչ ունենք անհոգնել առաջ շարժվելու համար:

Գծագրական թուղթ, հասարակ մատիտ, ռետին, գուաշ, ջրաներկ, կարկին, քանոններ, ռեզակ, սիլիկոնե ատրճանակ, ստեպլեր, մկրատ, սկոչ, էմուլսիա՝ սրանք այն հիմնական պարագաներն են, որոնք որպես առաջին անհրաժեշտության պարագաներ անհրաժեշտ են ձեռքի տակ միշտ ունենալ:

Կան նաև նյութեր, որոնք ձեռք են բերվում կոնկրետ նախագիծը իրականացնելու նպատակով, օրինակ կտորեղեն, պենոպլաստ, ջեռուցման խողովակներ, գիպս, սփրեյ, նիտրոներկեր և այլն: Նախագծի ավարտից հետո այդ ամենը խնամքով պահեստավորվում է, նոր նախագծերում օգտագործվելու նպատակով:

Տեխնոլոգիայի լաբորատորիան այն գրավիչ վայրն է, որտեղ անհրաժեշտ խորհրդատվություն ստանալով ֆիզիկայի ընտրությամբ խումբը կարող է գալ և գեղադիտակ պատրաստել կամ ճամբարի ժամանակ անզլերենի խումբը զբաղվի իր ներկայացման դեկորով: Լաբորատորիան տեխնոլոգիական լինելուց գատ կրթահամալիրյան կանոթ կենտրոն է:

Չենք մոռանում նաև ,որ դասաժամերի բացօթյա կազմակերպումը դիտվում է որպես սովորողի իրավունքների իրագործում: Հաշվի առնելով եղանակային առանձնահատկությունները, կան աշխատանքներ, որ ավելի հաճելի և օգտակար կլինի կազմակերպել դրսում: Բակ տեղափոխել թեթև կոնստրուկցիա ունեցող աթոռներ, սեղաններ, նկարակալներ կամ ուղղակի վայելել բնությունը՝ գետնին նստած:

Սովորողի տեխնոլոգիական և մասնագիտական հմտությունների զարգացում ուսումնասիրտադրական արհեստանոցներում

- <http://dpir.mskh.am/art.php?id=292>

3 Բովանդակությունն ըստ դասարանների, այդ թվում նաև՝

- մեդիամիջոցների (գործիքների, համակարգչային ծրագրերի, կրթահամալիրի կայքի) գործածության հմտություններ
- սովորողի ինքնուրույն յուրացման նյութը (ինքնակրթություն)
- կրթահամալիրի ուսումնական օրացույցը ծրագրում

Ես այս թեմայով ունեցել եմ հրապարակում<<Դպիր>> Էլեկտրոնային ամսագրում, ստորև ներկայացնում եմ հրապարակումն որոշակի կետերում ավելի մանրամասնելով:

Հարցադրում ինձ <http://dpir.mskh.am/art.php?id=532>

Տեխնոլոգիական հանրակրթության աստիճաններ

«Տեխնոլոգիական հանրակրթության աստիճաններ»-ը ծրագրային կետը ես ընդունեցի որպես լուրջ հարցադրում ուղղված ինձ, քանի որ աշխատում եմ կրտսեր դպրոցի 5-6-րդ և միջին դպրոցի 7-ից 9-րդ դասարանցիների հետ և գոնե ինձ համար ավելի տեսանելի է նրանց ձևավորման, զարգացման և ինքնադրսևորման փուլերի հաջորդականությունը: Հիմք ընդունելով կրթահամալիրյան տոնացույցը՝ տեխնոլոգիայի խմբերը հիմնականում հանդես են գալիս որպես ձևավորման նախագծեր իրականացնող և սպասարկող օղակներ: Աշխատելով միևնույն նախագծերի շուրջ՝ հաշվի առնելով տարիքային տարբերություններն ու առանձնահատկությունները, առաջադրվող խնդիրներն ու պահանջներն էլ են տարբեր լինում: Օեսին ծանոթ կրտսեր դպրոցն ավարտած միջին դպրոցի սովորողը ոչ թե ձանձրանում է միօրինակությունից, այլ որպես պաշար ընդունելով իմացածը, զարգացնում և նոր ձևերի է բերում: Կրթահամալիրյան կյանքը այնքան ռիթմիկ է, որ ես ինքս, տարիներ շարունակ աշխատելով կրթահամալիրում, ամեն նոր նախագծի իրագործմանը նույն հուզմունքով և լրջությամբ եմ մոտենում:

Ծրագիրը հրապարակելու առաջին օրվանից սկսած՝ ամեն օր փորձում են մտքում ձևակերպումներ, ճիշտ մոտեցումներ փնտրել: Ինձ օգնում է անդրադարձը կատարված աշխատանքին և կատարվելիք ծրագրերին: Չնայած, որ ուսպլանով կրտսեր դպրոցում տեխնոլոգիան բաժանվում է չորս, միջին դպրոցում՝ ութ դասընթացի, և դասավանդումը կազմակերպվում և իրագործվում է տարբեր լաբորատորիաներում, տարբեր մասնագետների կողմից, միևնույն է, տեխնոլոգիան ընկալվում է որպես մեկ ամբողջություն, շատ լայն և ծավալուն գործնելություն, որի հիմքում նույն մեր կյանքն է, մեր առօրյան, մեր խնդիրների լուծումը: Մշտապես փնտրել և փորձել են կապել առարկայի բաղկացուցիչ մասերը, որը ավելի ամբողջացնում և ուժեղացնում է ներդրված ջանքերը:

Կրտսեր դպրոցը ազատ ստեղծագործելու, բոլոր տեսակի վախերից և թերաբժեքությունից ազատվելու լավագույն հարթակն է, որը ամուր հիմք է ծառայելու միջին դպրոցում որոշակի որակների զարգացման և ձևավորման համար: Միջին դպրոցի սովորողը, ունենալով արդեն որոշակի հմտություններ, գիտելիքներ, օգտվելով ուսպլանով իրեն ընձեռված հնարավորությունից, պետք է փորձի հնարավորինս արդյունավետ օգտագործել մի դասընթացի ժամին ստացած գիտելիքն ու հմտությունը նաև մյուս դասընթացի դասաժամին: Օրինակ՝ գծագրությունը կօգնի դիզայնի դասին խորանարդիկի փովածքի ճիշտ գծագրմանը, դիզայնի դասին կպատրաստվի այդ խորանարդիկը, կձևավորվի՝ օգտագործելով մեդիատպագրության հնարավորությունները և արդյունքում այն կդառնա գովազդային փոքրիկ նմուշ: Մա մի օրինակ է ընդամենը այն գործունեության, որ արվում է տեխնոլոգիայի շրջանակում:

Շատ կարևորելով միջառարկայական կապը՝ կցանկանայի առանձնացնել մի փաստ ևս. տեխնոլոգիան կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, որտեղ մոտեցումները խիստ անհատական են՝ ելնելով սովորողների առանձնահատկություններից. լինում են դեպքեր, երբ՝ օրինակ, 7-րդ դասարանի սովորողը կարող է ավելի հմուտ գտնվել, քան իր ընկերը, ով սովորում է 9-րդ դասարանում: Շատ հաճախ աշխատանքները կազմակերպում են այնպես, որ նույն նախագծի վրա աշխատեն տարբեր տարքային խմբերի սովորողներ, որոնք իրար լրացնում և ամբողջացնում են: Նախագծերով աշխատելը օգնում է վերացնել տարիքային, անձնական անջրպետները:

Կուզենայի ուսպլանից մի քանի մեջբերում անել, որը թեման լիովին կամբողջացնի:

- Յուրաքանչյուր լաբորատորիա ապահովված է համակարգչով, պրոյեկտորով կամ էլեկտրոնային գրատախտակով, որոնք սնուցվում են համացանցից ապահովվելով սովորողի համար բոլոր անհրաժեշտ պայմանները, ազատ ինֆորմացվելու, ստեղծագործելու և ինքնարտահայտվելու: Սովորողը և դասավանդողը կրթահամալիրի գրադարանի, այդ թվում՝ մեդիանյութերի և միջոցների բաժանորդն են: Գրադարանը սովորողին է:

- Ուսուցումը կազմակերպվում է տանը և դպրոցում ուսուցողական թվային միջոցների կիրառմամբ: Սովորողը տանը և դպրոցում ունի համացանցին միացած համակարգիչ:
- Կրթահամալիրի կայքին հետևելը և կայքի աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
- Որպես ինքնուրույն յուրացման նյութ սովորողի ստեղծագործական և գեղագիտական զարգացումը, մասնավորապես՝ նախագծերի կատարման և նյութերի գեղարվեստական մշակման ընթացքում է ի հայտ գալիս:
- Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանով որոշված ճամբարներին, ուսումնական ստուգատեսներին, Հանրակրթական Դիջիտեքներին, մեդիաօլիմպիադաներին, ծեսերին և տոներին սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր աշխատանք է:

Մեդիան համախմբում է մեզ <http://dpir.mskh.am/art.php?id=176>

Հաջորդ տարի՝ նաև «Լավագույն լուսանկարչական շարք

4. Սովորողի ուսումնական գործունեության ձևերը. դրանց հիմնական բովանդակությունը, կազմակերպումը

Սովորողի ուսումնական գործունեության ձևերը ընդգրկում են տեխնոլոգիայի դասաժամեր պարտադիր ժամաքանակով, սովորողի ընտրությամբ և ակումբային գործունեություններ:

Տեխնոլոգիա առարկան դասավանդվում է տարեկան կտրվածքով և ունի առարկայական բաղկացուցիչներ, յուրաքանչյուր բաղկացուցիչին տրամադրված հստակ ժամաքանակով:

5-9-րդ դասարաններում տեխնոլոգիա առարկայի դիզայն բաղկացուցիչի ժամաքանակը կազմում է 12 ժամ, որը դասացուցակում արտացոլվում է շաբաթական երկուական ժամով:

Ուսուցման կազմակերպումը 5-9րդ դասարաններում պարույրաձև, անընդհատ վեր բարձրացող և զարգացող է: Յուրաքանչյուր դասարանի համար առաջադրված է կոնկրետ թեմաներ և կազմված է շատ հստակ առաջադրանքներ: Յուրաքանչյուր փուլի յուրացումը ամուր շղթա է մյուս փուլերը յուրացնելու գործում:

Սովորողի ընտրությամբ գործնելություն, կոնկրետ որևէ մի գործնելությամբ զբաղվելը սովորողի համար պարտադիր է, ընտրությամբ առարկայի նախընտրությունը սովորողինն է, էթե ուսուցչի կողմից այդ առիթով հատուկ հիմնավորումներ չկան, որը նույնպես քննարկելի է. Ընտրությամբ առարկային հատկացված է շաբաթական չորս դասաժամ, որը իմ կարծիքով բավական հազեցած ժամաքանակ է նմանատիպ գործնելություն իրականացնելու համար: Սովորողների թիվը ըստ ուսպլանի 12-ից 22 է: 5-ից 6-րդ դասարանի սովորողները և 7-9րդ դասարանի սովորողները ընդգրկված են տարբեր խմբերում: Այս խմբերում հիմնականում ընդգրկված են այն բոլոր սովորողները, որոնք ունեն տեխնոլոգիական հակումներ և սիրում են ստեղծագործել: Իրենց մարդկային որակներով, նույնպես տարբերվում են, բարեխիղճ են, համեստ, ընկերասեր:

Դպրոցում կատարվող հիմնական դիզայներական խնդիրները հենց այս խմբի օգնությամբ է լուծվում, նրանք իրենց գործում բավականին հմուտ են և սրտացավ: Ինչպես բոլոր խմբերում, այնպես էլ տեխնոլոգների խմբերում կան առաջատար սովորողներ, որոնց առկայությունը խումբն ավելի է ամրացնում, յուրաքանչյուրը հստակ գնահատելով իր հնարավորությունները, փորձում է ընկերոջից և միջավայրից հնարավորին շատ վերցնի և տա:

Նույն կերպ կնկարագրելի նաև տեխնոլոգիայի ակումբում տիրող մթնոլորտը, ուղակի այստեղ պահանջները այլ են, այստեղ սովորողը հաճախում է իր ցանկությամբ, չկա տարիքային հստակ սահմանափակում, ակումբին կարող են մասնակցել այլ դպրոցի սովորողներ, ակումբներում հիմնականում ընդգրկված են լինում 10-ից 12 սովորող: Ուսուցման պրոցեսը այստեղ խիստ անհատական է, ելնելով ակումբականների ընդգծված առանձնահատկություններից, տարիքային, սեռային, հոգևոր, աշխարհընկալման և այլն...

Սակայն այս ամենի կողքին չենք մոռանում մեր ամենակարևոր ձեռքբերումներց մեկի՝ նախագծեր առաջարկելու, նոր գաղափարներ ներմուծելու և իրականացնելու մասին, որը մեզ ավել է հզորացնում:

5. Դասարանում և տանը ուսումնական պարապմունքի, ինքնակրթության կազմակերպման մեթոդական նկարագրություն

Տեխնոլոգիայի դասերին հաճախ սովորողները հնարավորություն են ունենում ազատ ստեղծագործելու, որտեղ շատ հստակ երևում է յուրաքանչյուրի հետաքրքրությունները, ճաշակը, մտքի և ձեռքի համապատասխանությունը: Աշխատանքները սովորաբար կատարվում են մի քանի փուլով, ժամանակի սղության պատճառով լինում է այնպես, որ աշխատանքը սովորողը տանն է ավարտին հասցնում կամ ուղղակի տանն էլ է շարունակում իր աշխատանքը: Լինում է այնպես, որ սովորողը տանը սկսած աշխատանքը բերում, քննարկում, համապատասխան ցուցումներ ստանում և դասարանում է ավարտում: Տանը կատարվող աշխատանքը չի կարելի դիտել որպես պարտադիր աշխատանք, սովորողը ազատված է նմանատիպ աշխատանքից, տանը սովորողը աշխատում է միայն իր ցանկությամբ և հատուկ անհրաժեշտությունից ելնելով: Բացառությամբ մեդիաօլիմպիադաները, որոնք հիմնականում սովորողների ինքնուրույն դրսևորման և ընտանիքի ներգրավման լավագույն միջոց են համարվում:

6. Հատուկ ուսուցում. այդ թվում՝ սովորողների հետազոտական աշխատանք.
(ծրագիրն ընդգրկում է հնարավոր հետազոտական աշխատանքները՝ իրենց անոտացիաներով, որոնցից սովորողները կարող են խմբով կամ անհատապես իրենց ցանկությամբ ընտրել, որոշել դրանց կատարման ժամկետները) և հատուկ կարիքներով սովորողների աշխատանք

Տեխնոլոգիան իր բնույթով անընդհատ ստեղծագործելու, պրպտելու և կատրելագործվելու հնարավորություն ստեղծող բնագավառ է:

Սովորողները առնչվելով << տեխնոլոգիա >> առարկային, ակամայից իրենք էլ դառնում են այդ մեծ համակարգի մասնիկ՝ հեշտությամբ և սիրով ներգրավվելով գործընթացին: Որպես հետազոտական աշխատանք կցանկանամ հանդես գալ օրինակի նկարագրությամբ.

Կայքերից մեկում հայտարարված է մրցույթ, հստակ շարադրված են պահանջները և մոտեցումները: Ծանոթանալուց հետո գտնում ենք, որ թեման արժանի է ուշադրության և այն կարելի է զարգացնել: Քննարկման արդյունքում առանձնանում է սովորողների խումբ, որը հետաքրքրվում է այդ ամենով: Ստանալով համապատասխան աջակցություն, սովորողները խմբով կամ անհատապես ստանձնում են նախագիծը իրականացնելու պարտականությունը: Այս ձևը համարվում է սովորողի հետազոտական աշխատանք, որտեղ չկա պարտադրանք, փոխարենը ամբողջովին

հիմնված է անհատի էնտուզիազմի վրա: Լինում են դեպքեր, երբ սովորողը ինքն է փնտրում, գտնում իր հետազոտական աշխատանքի սկզբնաղբյուրը, ինքնուրույն հաղթահարում առաջադրված խնդիրները, ապա ՄՄԿՀ կայքում իր անձնական էջում, բլոգում թողարկում այն:

Լինում է նաև, որ ՄՄԿՀ կայքում մեզ հանդիպում է հայտարարություն, որտեղ հստակ նշվում է՝

Մայր դպրոցի, խոհանոցի կոնկրետ պատի համար /պատը ցուցադրվում է լուսանկարներով/ անհրաժեշտ է նոր տիպի մոտեցում, էսթիզ: Բոլոր հետաքրքրված անձիք, կայքի հարգելի օգտատերեր, սովորողներ կարող են ընդգրկվել նախագծում, կարևորելով այն միջավայրը, որտեղ մենք ապրում ենք, ստեղծագործում: Օրինակները բազում են:

Հատուկ կարիքով սովորողներին առանձնացնել չեմ ցանկանա, քանի որ նրանք ևս բավականին լավ ինտեգրվում են գործընթացին, շատ հաճախ նրանց մտավոր և ֆիզիկական առանձնահատկությունները ընդանուր աշխատանքային պրոցեսում չի առանձնանում, նրանք հաճախ ավելի ունակ և գործունակ են դառնում, որը իրենց լրացուցիչ ինքնավստահություն է ներշնչում, որով և բացատրվում է նմանօրինակ սովորողների սերը տեխնոլոգիա առարկայի նկատմամբ:

7. Ստուգման և կիսամյակային, տարեկան գնահատման կարգը. սովորողի ուսումնական թղթապանակի բովանդակությունը, ինքնաստուգման, ստուգողական առաջադրանքների ժամանակացույցը և բովանդակությունը Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է ծրագրի ղեկավարի, ուսումնական կենտրոնների ղեկավարների կիսամյակային, դասավանդողների և 5-6-րդ դասարանում սովորողների ամսական և կիսամյակային սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:

Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:

Ինչպես արդեն նշել եմ տեխնոլոգիա առարկան կազմված է բաղկացուցիչ դասընթացներից, որոնք ունեն ժամաբախշման հստակ համակարգ: Դիզայն առարկան դասավանդվում է 12 ժամ, շաբաթական 2-ական ժամով: Յուրաքանչյուր 12 ժամի համաձայն սովորողը ըստ ծրագրի պետք է յուրացնի և հմտանա ծրագրում նախատեսված առաջադրանքների փաթեթը: Յուրաքանչյուր դասընթացի համար սովորողը, ստանում է ընթացիկ գնահատականներ, որը տերեվերջին հիմք է ծառայում մեկ ամբողջական ամփոփիչ գնահատականի: Դասընթացները գնահատվում են երկմիավորանոց համակարգով: Խրախուսվում է սովորողների մասնակցությունը,

մեդիաօլիմպիադաներին, ցուցադրություններին, ցուցահանդեսներին: Դասապրոցեսում կատարված լավագույն աշխատանքները ու նախագծերը, մշտապես լուսաբանվում են ՄՄԿՀ կայքում, կազմակերպվում են ընթացիկ, ծիսական և այլ ցուցադրություններ: Ընտրությամբ դիզայն առակայի շրջանակում սովորողները շուրջ տարի հնարավորություն ունեն գրադվել իրենց նախընտրած գործնությամբ, ժամանակը քավական է ինքնադրսևորվելու, աճելու, նոր գաղափարներ իրականացնելու համար: Այս խմբի սովորողների համար իրենց նախընտրած առարկայի առաջադրանքները մեդիաօլիմպիադաների ժամանակ կատարելը պարտադիր և խիստ ցանկալի է: Ասեմ ավելին, առաջադրանքները հենց իրենք սովորողներն են առաջարկում, քննարկվում և բերվում է օպտիմալ ձևի՝ իրենց կատարման ժամանակի և արդյունավետության, արդիականության նկատառումներով: Այդ հանձնարարությունն լիովին ընդգրկում են ուսումնական օրացույցով սահմանված ծեսերն ու տոները: Ընտրությամբ խմբի սովորողները գնահատվում են 10 միավորանոց համակարգով, որտեղ հաշվի է առնվում մեդիաօլիմպիադաներին նրանց մասնակցությունն ու տարվա ընթացքում ցուցաբերած ակտիվությունը:

8. Սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներ. Միջին դպրոցի սովորողի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով, տեխնոլոգիայի ինչ որ ճյուղով հետաքրքրվելը, այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարելը արդեն կարելի է համարել հաջողություն, հաշվի առնելով սովորողի ներուժն ու աշխատասիրությունը, ուսուցիչը սովորողին պետք է ուղղորդի, չվնասելով և չազդելով սովորողի ինքնուրույն հետազոտելու, ստեղծագործելու և ինքնահաստատվելու գործին: Կարևորելով վերջնական արդյունքը, ուզում եմ շեշտել աշխատանքային պրոցեսում ձեռք բերված կարողություններն ու հմտությունները:

Սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներ.

- աշխատասեր
- նպատակասլաց
- հետաքրքրությունների լայն շրջանակով
- ստեղծագործող

Վառ երևակայությամբ սովորող, ով չի վախենում ինքնաքննադատությունից և նպատակասլացության արդյունքում ձեռք է բերում հետազոտող սովորողին բնորոշ բորոր որակները: Այս սովորողը անհատապես և խմբային բոլոր տեսակ նախագծերում ցուցաբերում է ակտիվություն, ունի սեփական ճաշակ, որը ընկերներին չի խանգարում ստեղծագործել, նա նաև ունի այնքան համառություն, որ ցանկացած իրավիճակում աշխատանքը հասցնում է ավարտին: Այդպիսի աշխատանքները հիմնականում իրենց տեղն են գտնում սովորողների անձնական էջերում, սոցիալական և ՄՄԿՀ կայքերում:

9. Ուսումնական ճամփորդությունները

Ուսումնական շաբաթը 6-օրյա է: Շաբաթ օրերը հատկացվում են հայրենագիտական, ուսումնական ճամփորդությունները, ուսումնա-հասարակական նախագծերը, լրացուցիչ կրթության պարապմունքներ կազմակերպելուն: Ուսպլանի այս պնդման հետ համաձայնելով, բերեմ մի օրինակ.

Ես ինքս ավագ դպրոցում չեմ դասավանդում, սակայն լինում են առիթներ, երբ ինչ-որ ցուցադրության հրավեր ենք ստանում կամ ուղղակի որոշում ենք պատկերասրահ այցելել, որի համար իմ ներկայությունը և փոխադարձ արդյունավետ, և հաճելի է լինում, քանի որ նրանք իմ սաներն են եղել, կրթությունը և կապը շարունակական է, իրար փոխանցելու բան ունենք... և ահա շաբաթ օրը հարմար և լավ ժամանակ է նմանատիպ միջոցառումների համար:

Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների բաղկացուցիչն են: Սովորողի մասնակցությունը այդ ճամփորդություններին պարտադիր է:

Ուսումնական ճամփորդություններին պատրաստվում ենք հանգամանալից, եթե օրինակ գնում ենք Գաֆեջյան կենտրոն՝ Վիկտոր Վազարելիյի աշխատանքների ցուցադրությանը, նախ ինտերնետում փնտրում, գտնում ենք մեզ հետաքրքրող ինֆորմացիան, պրոյեկտրի միջոցով դիտում, քննարկում ենք կազմակերպում, հնարավորության դեպքում տպագիր տարբերակները աչքի ենք անցկացնում:

Սովորողները հնարավորություն ունեն ցուցասրահ այցելել արդեն որոշակի պաշարով, որը ցուցադրությունը ավելի ընկալելի և տպավորիչ է դարձնում: Ճամփորդության մասին պատմող նյութը կամ անհատական նյութերը տեղադրվում են ՄՄԿՀ կայքում: Փորձում ենք ստեղծագործել տպավորության ազդեցության տակ:

10. Սովորողի ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գործնական կիրառությունների ձևերը (ուսումնա-հասարակական նախագծեր)

Սովորողները սահմանված կարգով մասնակցում են շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացմանը: Այդ աշխատանքը ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում:

Այդ աշխատանքները տեխնոլոգիայի դասի ֆորմատի մեջ շատ ճիշտ տեղավորվում են: Այս առարկայի շրջանակներում է, որ սովորողը ունենալով գործնեության հետ կապված տարրական գիտելիքներ, գործնականում զարգացնում և հանգում է որոշակի շոշափելի և տեսանելի արդյունքների, որը և ուսումնահասարակական նախագծի վառ օրինակ է հանդիսանում:

Օրինակ անցյալ ուսումնական տարում մի շաբթ լավ նախաձեռն իրականացրեցինք, օրինակ՝ ուրախ աղբաման ուսումնա-հասարակական նախագիծը, որը սովորողների մեջ մեծ ուրախություն և ոգևորություն առաջացրեց: Արդյունքում տհաճ աղբամանը վերափոխվեց, ակամայից սովորողների ուշադրությունը սևեռվեց նմանօրինակ նախագծերի վրա, չեմ բացառում նաև խնդիրը էկոլոգիական տեսակետից և այլն...

Սովորողները սահմանված կարգով մասնակցում են պարտադիր ինքնասպասարկմանը՝ հիգենիկ պահանջների պահպանում, ուսումնական

տարածքի և գույքի խնամք: Այդ աշխատանքը նույնպես ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում:

Այս կետով մենք բավական առաջ ենք շարժվել, արվեստանոցային պայմանները մեր համեստ ուժերով բարելավել, գույքը թարմացրել, ամրացրել, ներկել և բերել ենք համապատասխան վիճակի, որտեղ աշխատելը և հարմար է, և ցանկալի: Անձնական ներդրումը շատ էմ կարևորում քանի որ այն սրտացավություն և հոգատարություն է սերմանում:

Լաբորատորիայի տարածքը նույնքես մաքրվում և կարգի է բերվում ուսուցչի և սովորողների ջանքերով, որը գործի նվիրյալներին մոտ միմիայն ինքնավստահություն և տնօրինելու իրավունք է ավելացնում:

- Սովորողների կարողությունների զարգացում կրթական միջավայրի ստեղծման արդյունքում <http://dpir.mskh.am/art.php?id=332>